Բոլոր յերեխաներին առաջարկվում է սկզբում նկարել այդ թեմայով, ապա հերթով պահում են իրենց նկարները բովանդակությամբ: Ղեկավարը և պիտներները զրի յե առնում յերեխաների պատմածները: Ապա բոլոր յերեխաներին ցույց են տալիս նկարները և քննության են առնում, թե վոր նկարները պետք է զետեղել պատի թերթում: Մեծերին կարելի լի առաջարկել արտադրել ընտրված պատմվածքները և կպցնել: Կարելի լի առաջարկել վոր չներկված նկարները կպցնեն իրենց անհատական տետրակներում կամ ալբոմներում:

14) Գրել լողունգներ և պլակատներ:

Ղեկավարը կամ պիտներները գրում են լողունգներ, յերեխաները գունավորում են: Հաճախ պլակատներից կտրտել համապատասխան նկարներ և կպցնել պլակատներին:

15) Փոքրերի հետ դիտել բերքի վերաբերյալ գրքեր: Մեծերն այդ ժամանակ ազատ խաղում են: Կարելի լի տալ «ելեկտրական հավը» — Մառիկյանի և այլն:

16) Վտանաւոր սովորեցնել բերքի մասին և արտասանել տալ լողունգներ:

17) Պլակատ և ալբոմ պատրաստել «ինչ իմացանք բանջարանոցում» թեմայով:

17) Յերեխաները կարող են իբրև նյութ վերցնել հետևյալ մոմենտները «բանջարանոցի բարեկամները և ֆլասատուները»: «Ինչպես թրթռում թիթեռնիկ եղանում» ինչն է ոգնում, վոր լավ բերք ստացվի (ինամք պարարտացում և այլն): Բոլոր մոմենտների համար յերեխաները նկարներ են ջնդում և կամ իրենք են նկարում: Նկարները կրպցնում են ալբոմում կամ պլակատի վրա: Տակին գրում են պիտներների ոգնությամբ:

18) Լրացնել և կարգի բերել ցուցահանդեսը:

Յերեխաներին կարելի լի առաջարկել վոր բերքի տոնի առթիվ իրենց աշխատանքը ցույց տան ծնողներին և հյուրերին:

19) Նվազածության տակ՝ բանջարանոցի աշխատանքն արտահայտող խաղ կազմակերպել:

Քննության առնել, թե յերեխաներից ով է բացատրություն տալու ցուցահանդեսի մասին, ինչպես պետք է կազմակերպել ցուցահանդեսը: Այդ մասին պետք է խոսել մեծերի հետ:

20) Պատրաստել տոնի համար անհրաժեշտ նյութեր՝ աշխատանքի գործիքներ հաղթատ և այլն:

Դժվար գործերը կատարում են ղեկավարը և պիտները, պետք է մտածել թե ինչ կարող են անել յերեխաները և նրանց ներգրավել ալ տիվ աշխատանքի որինակ՝ կարտոնից շաբլոնով կարել մանգաղ, մուրճ լեղան և այլն:

21) Ցուցահանդեսի կազմակերպումը, լողունգների պատրաստումը ծաղիկներով զարդարելը և այլն: Հյուրասիրության համար կենսամթերք պատրաստել:

21) Յերեխաներն աշխատում են խմբերով: Ցուրաքանչյուր խմբի մեջ լինում են և փոքրերը, վորոնք ոգնում են մեծերին՝ կանաչներ ձյուղեր հավաքելու և այլն:

22) Մանկական նիստ, ուր համաձայնության են գալիս, թե ինչ պես պետք է կատարեն տոնը:

22) Նիստում պետք է բաժանել պարտականությունները, մի խումբ պետք է հյուրերին ընդունի, մյուսը ցուցահանդեսում բացատրություն տա, յերրորդը հյուրասիրի: Ղեկավարը արձանագրություն է կազմում վոր չմոռացվի, թե յուրաքանչյուր խումբ ինչ պարտականություն է վերցրել:

23) Յերեխաների գնալը կուտնտեսության ցուցահանդես:

23) Պարզ ձևով յերեխաների ուշադրությունը դարձնել աշխատանքի նվաճումներին վրա: Ընդգծել, վոր այս բոլորը կուտնտեսային միության արդյունքն է: Համեմատել, թե առաջ ինչպես էր, իսկ այժմ ինչպես:

24) Յերեխաների մասնակցությունը կարմիր գունակի (օճօճ) յերթին:

24) Նախորդ ղեկավարն իմանում է յերթի կարգը, յերեխաները դրոշակներով և թմբուկով դիմավորում և վողջունում են գումակը, արտասանում լողունգներ, յերգում մոմենտին համապատասխան յերգ:

ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.

1) Մանկապարտեզի խորհրդի նիստ հրավերել, քննության առնել բերքի տոնի պլանը:

2) Մոդների ներգրավումը, բերքի տոնի կազմակերպման գործին ոգնելու համար:

3) Պատի թերթի համար բերքի տոնի առթիվ հողված պարբատել (որինակ՝ ինչ են արել հրապարակի յերեխաները բերքի բարձրացման համար):

4) Մասնակցություն տոնի համար պատրաստվելուն ոգնել ցուցահանդես կազմակերպելուն եքսպոնատներով:

5. Մասնակցություն բրեզդներին սցցյուսմն ստուգելու և պարզկատման աշխատանքներին:

6) Տոնի համար ընդհանուր ժողովում ղեկուցելու «հրապարակի նշանակություն կանանց գյուղատնտեսության մեջ ներգրավելու և յերեխաներին վղպես ապագա կուլիկի վիթսական վողով դաստիարակելու հարցի շուրջը»:

Աշխատանք մանկ. հրապարակում առաջին որերից պետք է տարվի
աշխպես վոր նա նպաստի մանկ. կրթիկտիվի կազմակերպմանը: Պետք
է տանել վորոշ աշխատանք, վորպեսզի յերեխաները սովորեն միասին
խաղալ և աշխատել ընդհանուրի ոգտին, վոր նրանք սովորեն իրենց
անձնական շահերը յենթարկել կոլեկտիվի շահերին: Ի հաբկե, այդպիսի
վերաբերուեք չի կարելի ստեղծել միանգամից. այդ պետք է առաջ
գա յերեխաների խազի և աշխատանքի ընթացքում: Աշխատանքի ժա-
մանակ նրանք սովորում են միացիալ ուժերով ծրագրել աշխատանքը,
բաժանել իրար մեջ պարտականությունները, պատրաստել նյութեր և
միահամուռ ուժերով կատարել աշխատանք: Անհրաժեշտ է, վոր յերե-
խան սովորի տանել աշխատանքը մինչև վերջը, զիտակից վերաբերվել
իրան տված հանձնարարության և հաշիվ տալ իր կատարած աշխա-
տանքի մասին:

Սեփականատիրական ձգտումները, ընկերական համերաշխություն բացակայությունը, անփութ վերաբերմունքը դեպի հասարակական գույքը խոչընդոտ են հանդիսանում սոցիալիստական շինարարությանը։ Առաջին որերից պետք է սովորեցնել լեքելսաներին խնամքով վերաբերվել դեպի հրապարակի գույքը—չթափթփել խաղալիքները, դասավորել իրենց տեղերը, համերաշխ կերպով աշխատել ընկերներին հետ։ Առաջին որերից լեքելսաներն սկսում են համախմբվել խաղի շուրջը, ոգտվել ընդհանուր խաղալիքներից, աստիճանաբար սկսում են մասնակցել նաև աշխատանքի։ Մի քանի որից հետո լրորոշ աշխատանքի համար կարելի չի նշանակել հերթապահներ։ Այդպիսի աշխատանքներ հերթով պետք է կատարեն բոլոր լեքելսաները՝ իրենց ուժերի համապատասխան։ Ղեկավարը պետք է կազմի հերթապահության ցուցակ։

Կոլխոդում նրանք պետք է դիտեն՝ ինչպե՞ս է բաշխվում և դասա-
վորվում աշխատանքը և հետևեն ա՞յդ աշխատանքի կազմակերպ-
մանը:

Բրիգադային ձևը կարելի չե կիրառել բոլոր աշխատանքներին թացքում. որինակ՝ պաշտպանություն ունեցեալները բաժանվում են բրիգադների, մեկ բրիգադ պատրաստում է զրուշակներ, մյուսը կատարում է հարկավոր նշույթների գնումը, յերրորդը պատրաստում է լոգուսներ և այլն: Այս ձևի աշխատանք դասավորում է յերեսմաների մեջ կազմակերպվածություն, սովորեցնում է պատասխանատու լինել հանձն առած գործի համար, սովորեցնում է պատասխանել աշխատանքը և բաժանել մասնակցող աշխատանքի միջև, 4¹/₂—5 տարեկան յերեսմաներին ել կարելի չե տալ բրիգադային աշխատանք, իսկ նրանց կարողություններին համապատասխան: Յերեսմաներն առողջա կյանքում լսում են սոցմբցման, հարվածաչնություն մասին. ցանկալի չե սոց մրցման և հարվածաչնություն մոմենտներ մտցնել և հրապարակի աշխատանքներում: Որինակ՝ վոր լսումը կամ բրիգադը կարող է ավելի հաջող կատարել առաջադրված աշխատանքը, ստեղծել նոր պայմաններ, վորոնք կարող են բարելավել աշխատանքը և ավելի լավ արդյունքների հասցնել: Սոց-մրցման և հարվածաչնություն մեթոդ վորոշ աշխատանքների ասպարեիզում դաստիարակչական մեծ նշանակություն կունենա:

Որինակ՝ անտեսական և բանջարանոցի բրինձահերեր պայմանա-
վորվում են ժամանակին սկսել աշխատանքը նախորոք կատարել աշ-
խատանքի բաշխում, խնամքով վերաբերվել նյութերին, վերջացնել սկսած
աշխատանքը սխտեմատիկ ու կանոնավոր խնամել բույսերը մարդերը:

Ղեկավարը կամ ախոռները չերխանների մասնակցությունը հաշվի
չեն առնում սոց մրցման կամ հարվածայնություն կետերը-արդյոք ժա-
մանակին են սկսել, կազմակերպված են աշխատել, վերջացրել են, թե՞
կիսատ են թողել աշխատանքը և այլն, ով է խախտել պայմանագրերը:
Նշանակում են թերթի վրա ամեն մի հարցի վերաբերյալ արդյունք-
ները: Յեթե պայմանները խանգարում են դրված նպատակների իրա-
գործմանը, պետք է վերացնել խոչնդոտները:

Սոցմրցումն ու հարվածայնությունը գրավում է չերխանների
հետաքրքրությունը, առաջ բերում չերխանների ակտիվությունը, իր
աշխատանքի ընթացքում ավելի մեծ արդյունք տալու ցանկություն:
Ինչքան հաջող կազմակերպի ղեկավարը չերխանների խաղը, աշխա-
տանքը և հանգիստը, այնքան սերտ կապված կլինեն իրար հետ առ-
լեկտիվի անդամները:

2. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԱՆՅԿԱՅՆԵԼ ՈՐԸ ՄԱՆԿԱՆԸՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Որվա աշխատանքը մանկ. հրապարակում պետք է դասավորել
այնպես, վոր վորոշ հաջորդականություն պահպանվի աշխատանքի,
խաղի և հանգստի միջև: Ամսվա պահին պետք է լայն կերպով ոգ-
տագործել արևը, ջուրը և ողը: Վորպեսզի ժամանակը ռացիոնալ կեր-
պով ոգտագործվի, անհրաժեշտ է կազմել որվա ուժիմ, նշանակել՝ վոր
ժամին և ինչով պետք է զբաղեցնել չերխաններին, վոր չերխանները
չձանձրանան, չհոգնեն, կարողանան խաղալ և կատարել վորոշ հետա-
քրքիր աշխատանք: Առավոտվա ժամերը նվիրել այնպիսի կազմակերպ-
ված աշխատանքների, վորոնք պահանջում են ուժերի ավելի լաբվա-
ծություն և թարմություն, (զրույց պոլիտեխնիկական աշխատանք,
ձեռարկեստ) որվա վերջը ավելի հանգիստ աշխատանքի, կամ խաղի
(սեղանի խաղեր, զրքի նկարներ դիտելը և այլն):

Այնուամենայնիվ, ղեկավարը միշտ պետք է նկատի ունենա չե-
րխանների տրամադրությունը ու ցանկությունը և ըստ այն դասա-
վորի աշխատանքը: Յերբ առավոտյան չերխանները հավաքում են,
կարիքի զեպքում ղեկավարը տանում է կարճ անհատական զրույց
(որինակ՝ նկատում է, վոր չերխան գունատ է, կամ մի զարդարանք
ունի հագին, կամ տեղեկություն է ուզում ընտանիքից և այլն): Երբ
չերխանները հավաքեն, պետք է ստուգել նրանց մաքրությունը, այ-
նուհետև լրացային վարժություն (зарядка) անել և այնուհետև անց-

նել կազմակերպված աշխատանքի՝ նկարել, պատմել, յերգել, ծե-
վել և այլն:

Սմեն մի կազմակերպված աշխատանքի պետք է հաջորդի խաղ,
կամ ազատ զբաղմունք:

Նախաճաշից առաջ որվա առաջ ժամանակը կարելի է կազմակեր-
պել ողի կամ արևի վաննաներ, շփումներ ջրով (նախորոք պայմանա-
վորվելով և ոգտվելով բժշկի ցուցմունքներով): Որվա սեփմը կարելի
է դասավորել մոտավորապես հետևյալ կերպ՝

6—ժամյա աշխատանքի որ.

8 — $8\frac{1}{2}$ -ը չերխանների հավաքելը և սանիտարական զրույց.

8 $\frac{1}{2}$ — 9.ը՝ սանիտարական ստուգում և զարկադկա (մարզանքի):

9—10.ը՝ կազմակերպված աշխատանք (կավի, ոգտագործություն,
նկարչություն, պատմություն, զրույց, ձեռարկեստ, կենդանի անկյան
խնամք, եքսկուրսիա : այլն):

10 — 10 $\frac{1}{2}$.ը՝ ողի և արևի վաննաներ, շփումներ ջրով և հանգիստ

(10 րոպե):

10 $\frac{1}{2}$ — 11.ը՝ նախաճաշի պատրաստություն, լվացվել:

11 — 11 $\frac{1}{2}$.ը՝ նախաճաշ:

11 $\frac{1}{2}$ — 12 $\frac{1}{2}$ -ը՝ քուռ, հանգիստ:

12 $\frac{1}{2}$ — 2 ը՝ ազատ ստեղծագործական խաղ, եքսկուրսիա, զրու-

սանք:

Ցանկանալի է չերխաններին կիրակրել 2 անգամ, 8. ժամյա հրա-
պարակում հանգիստը յերկարացնել մինչև 2 ժամ:

Հանգիստից հետո տալ ևս $\frac{1}{2}$ ժամ ազատ աշխատանքի:

Խաղի և աշխատանքի այս տեսակ դասավորումը չերխապին էի
հոգնեցնի կնպաստի նրա առողջացմանը:

Նպատակահարմար է եկսկուրսիան կատարել թարմ ուժերով.
զրոսանքը կարելի է թողնել նախաճաշից հետո:

Մինչև 5 $\frac{1}{2}$ տարեկան չերխապի զրոսանքը (քայլելը) մեկ քա-

ռորդ ժամից ավել չպետք է տևի մեծելը կարող են քայլել և կես ժամ:

Մանկահրապարակի ղեկավոր նպատակներից մեկն է յերեխայի առողջացումը: Ամառվա ընթացքում պետք է ավելանա յերեխայի քաշը, ամրանա որդանիզմը: Հենց հրապարակի կազմակերպման սկզբի որերից անհրաժեշտ է յերեխաներին յենթարկել բժշկական քննության և բուրդին կշռել ու քաշը նշանակել մատչանում: Մոռոններին ևս պետք է ծանոթացնել մանկա առողջապահության կանոններին, թե ինչ ոգտակար է ինչը մլասակար յերեխայի համար, ինչպես պետք է ապրել առողջ լինելու համար: Այս նպատակին կարելի յե հասնել, յեթե կանոնավոր կերպով կազմակերպվի յերեխայի կյանքը մանկահրապարակում և սխաեմատիկ անցկացվի որվա ռեժիմը:

Ամբողջ որբ յերեխաները պետք է անցկացնեն բացօթյա, ուտեն, խաղան հնգստանան միշտ վորոշ ժ մերին: Յերեխաները պետք է և ընտելանան կարգապահության վորոշ ռեժիմի: Շնորհիվ կարգավորված կյանքի՝ մանկ. հրապարակի որն անցնում է աշխուժ, կազմակերպված և նպաստում է յերեխայի առողջացմանը:

1. Առավոտն ուտելուց առաջ, աշխատանքից հետո, քնելուց առաջ արտաքնոց գնալուց հետո, յերեխաներին պետք է սովորեցնել միշտ լվացվել. ղեկավարը պետք է հետևի, վոր այդ կատարվի կանոնավոր, վորպեսզի յերեխայի մեջ պատվաստվեն սանիտարական ունակություններ:

Լվացվելու բոլոր պարագաները պետք է հարմարեցնել յերեխաների պահանջներին: Ամեն մի յերեխա պետք է ունենա առանձին սրբիչ, կախելու տեղ, սրբիչն ու կախարանն ունենա վորոշ նկարով նշան, վերպեպի յերեխան ճանաչի իր սրբիչն ու իր տեղը, լվացարանը, սապոնն ու սրբիչը պետք է դասավորել այնպես, վոր յերեխան կարողանա ռգավել հարմար ձևով, առանց մեծերի ռգնության:

Սկզբից յերեխան գժվարանում է ինքը կանոնավոր լվանալ վ/զը, ախանջները, ձեռները, բերանը վորողել, անհրաժեշտ է ղեկավարին ռգնությունը: Յեթե սովորեն, այնուհետև ղեկավարը միայն հետևում է վոր այդ կատարվի կանոնավոր:

Յերեխաների հետ զրուց տանել մաքրության մասին, նկարներ, ցուց տալ վոտանավորներ սովորեցնել, գիրք կարդալ, առողջապահության վերաբերյալ: Իրանք յերեխաները պետք է հետևեն լվացարանների մաքրությանը, շուր լցնեն, փոխեն կեխտոտ սրբիչները և այլն:

Յերեխաներին պետք է սովորեցնել կանոնավոր ռգավել արտաքնոցից, քիթը սրբել թաշկինակով և այլն:

Յերեխաների հագուստը ամառը պետք է լինի թեթև, վոտները, վիզը, կուրծքը բաց (տրուսիկ, կոմբինե):

2. Յերեխայի սնունդը պետք է ղրված լինի լավ հիմքերի վրա: Յերեխաներին միշտ ուտելու յեն վորոշ ժամերին, կազմակերպված ձևով: Պետք է հետևել, վոր յերեխաներն ուտեն կանոնավոր, լավ ծամեն, գտվեն գգալով, իրանց շուրջը վշրանքներ չթափեն: Նախաճաշի համար կազմակերպվում է յերեխաներից հերթապահություն, նրանք պատրաստում են սեղանը, բաժանում նախաճաշը, լվանում և հավաքում ամանները:

3. Նախաճաշից հետո պետք է քնեցնել յերեխաներին բաց ողում, 1—2 ժամ, պետք է հետևել, վոր յերեխաները պառկեն հանգիստ և իրենց ընկերներին չխանգարեն քնելու: Յերեխային ծածկել թեթև շորով: Դնեցնել կոյկաների կամ փավածների վրա:

4. Ամառը պետք է ռգաագործվի արևը, ողը, շուրը յերեխայի որդանիզմն ամբապնդելու համար: Արևի, ողի վաննաները և շրի շրփումներն անցկացնել ուտելուց առաջ առավոտյան 10—11 ժամերին, բաց և չոր տեղում, ցանկանալի յե գետի ափին, վորպեսզի արևի վաննաներից հետո յերեխաները լողանան գետում: Արևի վաննաները պետք է անցկացնել գգուշորեն, բժշկի խորհուրդով, բժշկական քննության յենթարկելուց հետո. հակառակ դեպքում այդ վաննաները կարող են վառագել յերեխա յ առողջությունը: Ջերմող յերեխաներին արգելվում է արևի վաննա ընդունել: Ողի վաննաները նույնպես շատ ոգտակար են: Յերեխաները հանում են շորերը և մերկ խաղում են, 5 բոպիցից սկսած մինչև 30 բոպե, աստիճանաբար ավելացնելով մաքուր ողին վարժեցնելը:

Արևի և ողի վաննաների նշանակության մասին պետք է ղրուց տանել յերեխաների հետ, վոր նրանք սիրով մասնակցեն:

4. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Կյանքից դուրս, քաղաքականությունից դուրս դպրոցը՝ խաբելություն է, ասել է ընկ. Լենինը դեռ 1918 թ: Այս ֆորմուլայի դեմ վոչվոք չի վիճում: Ե՛լ ավելի պետք է ուժեղացնենք դասակարգային ֆրոնտը լուսհիմնարկներում: Ձուր չե, վոր 4-րդ համառուսական դպրոցական համագումարն անցավ «պալքար նախադարոցականի իդեոլոգիայի համար» լողունգի տակ:

Մեր գլուղը վերակառուցվում է նոր՝ սոցիալիստական հիմունքներով: Ամենուրեք յոռում է դասակարգային պալքարը: Քաղաքական դեպքերը չեն վրիպում ևս նախադարոցական յերեխային ուղադրությունից, նա վերամշակում է իր ստացած ապավորությունները մանկական ուղեղում և վորոշ գիրք է բռնում իրան շրջապատող հասարակական կյանքի նկատմամբ:

Յերեխաները պետք է դաստիարակվեն այնպես, վոր նրանք ունենան ցանկութուն և կարողութուն, իրենց ուժերի համապատասխան աշխատավոր ժողովրդի շահերը պաշտպանելու:

1. Դասակարգային դաստիարակություն:

Սոցիալիզմ կառուցող ակտիվ մարտիկներ դաստիարակելու համար անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել դասակարգային դաստիարակութան խնդիրներին վրա: Հրապարակում աշխատող ղեկավարը պետք է լավ հիշի, վոր յերեխաներին չի կարելի հեռու պահել շրջապատող իրականությունից, սահմանափակել նրանց հետաքրքրությունը միայն հրապարակի ներքին կյանքով: Մենք պետք է կազմակերպված ձևով մոտեցնենք յերեխային արդի կյանքին, իր ուժերի համապատասխան մասնակից դարձնենք սոցիալիստական շինարարությանը, ծանոթացնենք իրականությունը և ոգնենք ճիշտ ըմբռնելու շրջապատող կյանքը:

Յուրաքանչյուր ղեկավար պետք է գիտակցի, թե ինչպես կա և վոր է յերեխաների ճիշտ դասակարգային դաստիարակությունը: Նա պետք է ուշի ուշով հետևի յերեխաների արտահայտություններին, վերաբերություններին դեպի շրջապատող կյանքը, վորպեսզի ժամանակին տա ճիշտ ուղղություն, մշակի դասակարգային դիրքավորում: Յերեխաների հետ մարվող աշխատանքները պետք է համապատասխանի դասակարգային դաստիարակության խնդիրներին:

Որինակ՝ հրապարակը նոր է կազմակերպվում, գտլիս են յերեխաներ զանազամ խավերից, վորտեղ կան և չքավորներ, և միջակներ, հագնված են տարբեր: Յերեխաները խորթ աչքով են նայում վատ հագնվածներին: Դեկավարը պետք է կարողանա իր ուշադիր վերաբերմունքով դեպի չքավորներն աննկատելի կերպով համախմբի բոլոր յերեխաներին վորևի խաղի և աշխատանքի շուրջը: Այս տեսակետից ամենալավ միջոցն է բոլոր յերեխաներին տալ միատեսակ գոգնոցներ, կազմակերպել ընդհանուր նախաճաշ: Դեկավարը պետք է տանի սխտեմատիկ՝ շխատանք յերեխաների սեփականատիրական ձգտումների դեմ պայքարելու:

Տղամեծի յեվ աղջիկների հավասար դաստիարակության խնդիրը: Մեր միություն մեջ տղամարդու և կնոջ իրավունքները հավասարեցված են բայց մեր կենցաղում դեռ ևս նկատվում են մեծ տարբերություն կնոջ և տղամարդու միջև: Կինը քիչ հնարավորություն ունի մասնակցելու հասարակական և արտադրական աշխատանքներին, նա ծանրաբեռնված է տնային մասը, բթացնող աշխատանքներով: Հրապարակում

յերեխաները պետք է հավասար մասնակցություն ունենան հասարակական քաղաքական կյանքին,

Տղաների և աղջիկների բաժանումը ըստ աշխատանքի և խաղի չպետի տեսակի՝ չպետի լինի մանկհրապարակում, որինաի՝ նախաճաշը պատրաստում են աղջիկները, իսկ նույն ժամանակ տղաները աշխատում են բանջարանոցում, կամ տղաները ձի չեն խաղում, իսկ աղջիկները կար են անում: Նման բաժանում չպետք է լինի: Թե աղջիկները և թե տղաները հավասար կերպով պետք է մասնակցեն թե անտեսական և թե բանջարանոցի աշխատանքներին:

Դեկավարը պատմում է համապատասխան պատմվածք, վորտեղ նկարագրված է, վոր սոց. շինարարությունը կինը մասնակցում է տղամարդու հետ հավասար կերպով, ցույց է տալիս հեղափոխական կանանց նկարներ (Կրուպսկայա, Կլարա-Յետկին, Ռոզա Լուկսեմբուրգ):

Դեկավարը պետք է համապատասխան աշխատանք տանի և ծնողների հետ, վորպեսզի նրանք ընտանիքում հավասար վերաբերմունք ունենան դեպի աղջիկները և տղաները և այդ սկզբունքը կիրառեն իրենց կենցաղում:

Ձրույցների, անհատական խորհուրդների և ընտանիքների աջակցությունների միջոցով մասսայականացնել յերկսեռ հավասար դաստիարակություն հարցը:

բ. Ինտերնացիոնալ դաստիարակություն. — Ինտերնացիոնալ դաստիարակությունը դասակարգային դաստիարակության հիմքն է: Բոլոր յերեխաների բուրժուազիան կատաղի պայքար է մղում պրոլետարիատի դեմ և կռվի յե պատրաստվում խորհրդային Միության դեմ: Մենք պետք է նախադպրոցական հասակից դաստիարակենք յերեխաներին այնպես, վոր նրանք գիտակցեն, վոր ամբողջ աշխարհի աշխատավոր ժողովուրդն ունի ընդհանուր շահ, շահագրգռված է կապիտալիստական կարգերի տապալմամբ:

Կոլտնտշինարարության հաջողությունները համատարած կռիվներով և ցամաքի շրջաններում, կուլակին, վորպես դասակարգի, վերացումն առաջ և բերում ազգային տրամադրություններ: Դասակարգային թըշնամին աշխատում է լարել տարբեր ազգերի աշխատավորներին իրար դեմ, վորպեսզի մթաղնի դասակարգային պայքարը: Հաճախ նախադպրոցականը գտլիս է հրապարակ թունավորված ազգային-ըզկեն տրամադրություններով, թշնամական վերաբերմունք ունենալով դեպի հարևան ազգերը: Յերեխան հրաժարվում է խաղալ «թուրքի», «քրդի» հետ, «թուրք» և «քուրդ» բառերը գործի անվում իբրև վիրավորական բառեր:

Յերեխաներն արտահայտում են անշուշտ այն տրամադրություն-

ները, վոր տիրում է իրենց շրջապատում: Այդ տեսակետից անհրա-
ժեշտ է տանել կազմակերպված աշխատանք թե ծնողների և թե ան-
կազմակերպ ազգաբնակչության հետ:

Հեկավարը պետք է ողորդորդի ամեն մի առիթ՝ ինտերնացիո-
նալ դաստիարակությանը դարկ տալու նպատակով:

Անհրաժեշտ է կարգալ պատմվածքներ ուրիշ ազգերի աշխատա-
վորության կենցաղի մասին, ցույց տալ համապատասխան նկարներ,
կազմել ալբոմներ, կազմակերպել ինտերնացիոնալ բնույթ կրող ցերե-
կույթներ, պահպանել կենդանի կապ ուրիշ ազգի մանկահրապարակի
հետ: Լավ կլինի նամակագրություն ունենալ ուրիշ ազգի մանկապար-
տեզի հետ:

գ. Հակակրոնական դաստիարակության պրոբլեմն աճող սերնդի դաստիարակման խնդրում հատուկ
տեղ է զբաղում: Հակակրոնական ֆրոնտը դասակարգային կատարի
պայքարի սրման ճակատն է: Ներկայումս այս խնդրին դրվում է իր
ամբողջ կշռվածքը: Դեռ վաղուց չե, վոր մեր մանկավարժներն ընդու-
նում ելին անկրոն դաստիարակություն՝ առանց հաշի առնելու աֆն
միջավայրը, վորտեղից գալիս է լեբելսան: Ներկայումս հակակրոնական
դաստիարակությունն անհրաժեշտություն է համարվում խորհրդային
մանկավարժության կողմից:

Ֆերելսան ապրում է դասակարգային հասարակությունների պայ-
քարի սրման միջավայրում, վորտեղ տերտերն ու չարչին, կուլակն ու
սեկտանտը կրոնի միջոցով աշխատում են մթափնել դասակարգային
պայքարը: Ներկա հետաձուլ ընտանիքներում կրոնասեր աատը և
անցյալի ժառանգությունից չազատագրված մայրը լցնում է լեբելայի
միտքը զանազան կրոնական սնոտիապաշտ հավատալիքներով: Դասա-
կարգային թշնամին ոգտագործում է այդ հանգամանքը: Այդպատճա-
ռով հակակրոնական դաստիարակությունը դառնում է նախադպրոցա-
կան աշխատանքների մարտական խնդիրներից մեկը: Անհրաժեշտ է
պարզել լեբելսաններին կրոնի դասակարգային բնույթը, հասկացնել,
վոր կրոնը միշտ ել դեմ է լեղել աշխատավոր ժողովրդի շահերին, վոր
նա խանգարում է սոցիալիստական շինարարությանը և հակասում է
գիտությունը:

Հակակրոնական աշխատանք չպիտի կրի կամպանիայի բնույթ,
այլ պետք է թափանցի առողջա բոլոր աշխատանքների մեջ:

Ֆերելսանների ակտիվ գործնեյությունը, նրանց հետադոտական
աշխատանքները բնութայն մեջ պետք է ոգտագործել՝ սնոտիապաշտու-
թյունները և կրոնական հավատալիքները վերացնելու համար:

Որինակ՝ բանջարանոցային աշխատանքների ժամանակ կարելի
է առանձնացնել մի փոքրիկ մարդ և թողնել ասածու խնամքին, իսկ

մյուսը պարարտացնել և խնամել սիստեմատիկ կերպով: Հետագայում
լեբելսանների հետ ձևակերպվում է հետևանքը «ինքներս աշխատեցինք
և լավ արդյունք ստացանք», «հույս դրեցինք աստծուն, վորինչ չըս-
տացվեց»: Հակակրոնական դաստիարակությունը ուժեղացնելու համար
ծնողներին կապել Մարտնչող անսաված միություն հետ:

դ. Պոլիտեխնիկական դաստիարակություն. Սոցիալիստական վերա-
կառուցման շրջանը պահանջ է դնում պատրաստել նոր մարդ, վոր
ընդունակ լինի իրագործելու սոցիալիստական շինարարության նոր
խնդիրները, ընդունակ լինի հսկայական աշխատանքի՝ լեբելի արտա-
դրական, տեխնիկական բազալի վերակառուցման ասպարեղում: Նոր
մարդը պետք է ունենա բազմակողմանի ծանոթություն բնության,
նրա արտադրական ուժերին և տեխնիկային, վոր հպատակեցնում է
բնության ուժը մարդկային պահանջներին: Այդ պատճառով կարգերի
պատրաստման հարցը պետք է դրվի հենց մանկապարտեզից: Պոլի-
տեխնիկական դաստիարակությունը պետք է կիրառվի նախադպրոցա-
կան հասակից: Պոլիտեխնիկով տեսական ու գործնական ուսումնասի-
րությունն է գլխավոր արտադրությունների (Համ կի), ուսումնասի-
րությունն է բոլոր արտադրություններին հատուկ ընդհանուր սկզ-
բունքների, նա յուրացում է աշխատանքային ունակությունների՝
կապված տարրական գործիքների գործածելու հետ, պոլիտեխնիկով
տեխնիկայի ուսումնասիրությունն է:

Արտադրությունների կազմակերպման հիմնական սկզբունքները,
վորոնց մենք կարող ենք ծանոթացնել նախադպրոցական լեբելային,
հետևյալներն են՝

1. Աշխատանքի բաժանում.
2. Աշխատանքի մեքենայացում.
3. Աշխատանքի ռացիոնալ կազմակերպում (պլանավորում, հաշ-
վառում, աշխատանքի նպատավոր միջավայրի կազմակերպում, գոր-
ծիքների ռացիոնալացում և այլն):

Նկատի ունենալով, վոր գործիքների թիվը և նրանց հետ վար-
վելու ունակությունները բազմազան են, ծանոթացնել այդ բոլորին
փոքր հասակում՝ անհնարին է: Բայց վորպեսզի լեբելային կարողանա
յուրացնել արտադրությունների ընդհանուր սկզբունքները, ձեռք բերի
տարրական աշխատանքային ունակություններ, անհրաժեշտ է զա-
րացնել նրա հոգեբանական ընդունակությունները, նրա սենսոր-մո-
տորային և ուղեղի կենտրոնական վերամշակող ապարատը: Ուրեմն
պոլիտեխնիկական դաստիարակության հիմք պիտի ծառայի լեբելային
մտավոր և ֆիզիկական ընդունակությունների զարգացումը: Ի՞նչ կա-
բելի լեբելի իրագործել տյո տեսակետից մանկ. հրապարակում: Ֆերելսայի

թե խաղը և թե աշխատանքային պրոցեսները պետք է բղխեն վոչ միայն մանկ. կոլեկտիվի պահանջներից, այլ սերտ կապված պետք է լինեն արդիականության հետ, սոցիալիստական շինարարության խնդիրների հետ: Պատվաստելով լերեխայի մեջ մի շարք ունակություններ, պետք է զարկ տալ պոլիտեխնիկական ունակություններին զարգացնել գործիքներից ոգտվելու ունակություններ, նպատակահարմար կերպով ոգտագործել նյութերը, գիտակցաբար կատարել ծրագրված կոլեկտիվի աշխատանք (ծրագրել, բաժանել, աշխատանքը, չափել, հնարել):

Զուգընթացաբար ծանոթանալ նյութերի և գործիքների հատկություններին: Մանկահրապարակի ամբողջ միջավայրը պետք է կազմակերպվի մտածված ձևով վորպեսզի մղի լերեխային դեպի սպեղծագործություն, լայնացնի նրա մտավոր հորիզոնը, զարկ տա հետազոտական ունակությունների զարգացման, զարգացնի լերեխայի մեջ հետաքրքրություն դեպի տեխնիկան:

Այդ նպատակին կարող են ծառայել վոչ պիտանի նույթեր՝ տախտակ, աղյուս, պարան, խողովակներ, լուսամուտի շրջանակ, մեքենաների մասեր, անիվներ և այլն, վորոնք կարող են ոգտագործվել լերեխայի ազատ խաղի և ստեղծագործական աշխատանքների ժամանակ: Նույն նպատակի մեծ չափով նպաստում են երկուրդիաները դեպի արտադրություն, վորտեղ լերեխան ծանոթանում է գյուղատնտեսական մեքենաների կառուցվածքին, կատարվող գործնական աշխատանքներին: Տնտեսական աշխատանքները լերեխային ծանոթացնում են մթերքների հետ, նրանց հատկությունների և փոփոխություններին վերամշակման ընթացքում: Հաջորդ կերպով ընտրված պատմությունը, արտադրական զրքերը ու խաղերը, վորտանավորներ, լերզը, պլակատը լրացնում են լերեխայի տպավորությունները: Նկարը և ծեփվածքը միջոց են լերեխայի տպավորությունների վերաբրտագրման:

Ե, կապ պիոնեռ կազմակերպության հետ. — Յերեխաների հասարակական քաղաքական դաստիարակություն խնդրում մեծ դեր է խաղում աշխատանքը պիոնեռ կազմակերպության հետ: Պիոնեռը լերեխայի մեծ ընկերն է, նրա զրույցներից լերեխան իմանում է՝ ովքեր են պիոնեռները, ինչու համար են պայքարում, նրանց լողունդն է՝ «բանվոր դասակարգի պայքարի գործում միշտ պառնաստ»: Յերեխաներն իմանում են, վոր պիոնեռներն անասավածներ են, վոր նրանք կանգնելով միջազգային բանվորների կողմը՝ ոգնում են սոցիալիզմի շինարարության պայքարում են հարուստների և կուլակների դեմ:

Պիոնեռների միջոցով լերեխաներն իմանում են քաղաքական գանազան դեպքերի մասին: Այդ բոլորի մասին պատմում են մատչելի

ձևով և կազմակերպում են նրանց հասարակական հանրագում աշխատանքը: Ղեկավարը պիոնեռներին պետք է ծանոթացնի իր ծրագրին, նախորդ պայմանավորվի տարվելիք աշխատանքների մասին: Պիոնեռը մասնակցում է հրապարակի կազմակերպչական և տնտեսական աշխատանքներին:

Վորպեսզի դեկավարը դասակարգային ճիշտ մոտեցում ունենա դեպի դաստիարակչական գործը, նա ինքը պետք է ապրի բանվոր դասակարգի շահերով, ակտիվ մասնակցի սոցիալիստական շինարարության: Ղեկավարը պետք է մեծ ուշադրություն դարձնի ինքնադարգացման գործին, ճիշտ վորոշի իր դասակարգային կոմունիստական դիրքավայրում, իդեոլոգիան և անձնակաճ վարքը: Այն դեկավարը, վոր ունի ճիշտ դասակարգային մոտեցում, վոչ միայն գիտակցություն, այլ և վարքով կարող է դաստիարակել լերեխաներին կոմունիստական վորդով:

5 ԽԱՂ, ՅԵՎ, ԱՇԽԱՏԱՆԿ

Յերեխաների աշխատանքին պետք է մեծ տեղ և ուշադրություն հատկացվի մանկահրապարակում: Աշխատանքի ընթացքում լերեխան զարգանում է ֆիզիկապես և մտավոր ձևով և բերվում շատ գիտելիքներ, սովորում է աշխատել կոլեկտիվում և կոլեկտիվի համար, ըմբռնում է աշխատանքի նշանակությունը:

Առաջին որից լերեխաները պետք է զբաղվեն իրենց կյանքի կազմակերպումով: Կարգ ու կանոն մտցնելու համար պետք է տեղ վորոշեն՝ հրապարակի իրերի, նյութերի, կախարանների, սրբիչների և գործիքների համար: Վորպեսզի աշխատանքն արդյունավետ լինի, չհոգնեցնի լերեխային, գործիքները և նյութերը պետք է լինի լերեխայի հասակին և կարողություն համապատասխան և պահվեն այնպես, վոր լերեխան ինքը կարող սնա վերցնել և տեղը դասավորել: Յերեխաների աշխատանքի տեղը հով պետք է լինի. ուժեղ արևի տակ աշխատելը լերեխաներին ֆիսս է: Աշխատանքն սկսելուց առաջ անհրաժեշտ է նախատեսել, թե ինչ նյութեր և ինչ քանակով են հարկահար: Նյութերը և գործիքները՝ սոսինձ, թուղթ, վրձին, տախտակ և այլն, նախապես պատրաստվում են դեկավարի կողմից, լերեխաների մասնակցությամբ. կազմակերպված աշխատանք նպատակահարմար է տալ Ժ 10 — 11 ը, վորովհետև այդ ժախին լերեխաներն ավելի թարմ են, աշխատում են ավելի հետաքրքրությամբ և չեն զգում հոգնածություն: Աշխատանքը կարող է տևել 25 — 30 բուպե մեծերի համար և 15 — 20 բուպե՝ փոքրերի: Աշխատանքը կատարվում է բացօթյա: Ղեկավարը պետք է հետևի, վոր աշխատանքի ժամանակ լերեխաները ուղիղ

նստեհ, չկռնան, չբռնար չնստեն կռացած վիճակում, թե չե յերե-
խան վողնաշարի ծովածք կստանա:

Մեծ նշանակութիւն ունի յերեխայի ֆիզիկական բնութեան համար սանիտարական ունակութիւններն պատվաստումը: Ուժեղ սա-
նիտարական աշխատանք պետք է տարւի թե հրապարակում և թե
ընտանիքում: Առաջին որերից ղեկավարը պետք է հետեւի, վոր մանկ-
հրապարակում և նրա շրջապատում մաքրութիւն պահպանի: Յերեխա-
ները պիտոհրենքի և ղեկավարի ոգնութեամբ հետեւում են հրապարակի,
չենքի պահարանների մաքրութեանը, տարածում են ալո սովորութիւնն
իրենց ընտանիքում (պաշար միջատների դեմ):

Այդ ուղղութեամբ ղեկավարը տանում է համապատասխան զրույց-
ներ մաքրութեան նշանակութեան մասին, յերգ, վտանամոլոր, պատ-
մութիւն: Յեթե ամառվա ընթացքում յերեխաներն առողջանան, ավե-
լացնեն իրենց քաղը, ձեռք բերեն կարգապահութեան և մաքրութեան
ունակութիւնները, աշխատանքը պետք է համարել իր նպատակին հա-
սած:

Շատ կարևոր է աշխատանքի կանոնավոր բաժանումը: Յեթե
աշխատանքին մասնակցում են տարբեր հասակի յերեխաներ, փոքրերին
տրվում է ավելի հեշտ աշխատանք, վոր նրանք կարողանան վերջաց-
նել ավելի շուտ: Դժվար աշխատանքներին փոքրերը չեն մասնակցում,
նրանք ալո ժամանակ կարող են դրադիլ խաղալիքներով: Շատ ան-
գամ գործիքները քիչ լինելու պատճառով աշխատանքը տարվում է
հերթով, փոքր բերեալներով: Կարելի չե բաժանել աշխատանքն աշ-
պես, վոր յուրաքանչյուր խմբակ տարբեր աշխատանք կատարի: Որի-
նակ՝ դրոշակներ պատրաստելիս մի խմբակ ձևում է թուղթը, մյուսը
առսինձ է քսում, յերրորդը կպցնում պարանին: Անհրաժեշտ է, վոր ա-
մեն մի խմբակ լավ հիւի, թե աշխատանքի վոր մասն է հանձնված
իրան, և խմբակով կատարի: Աշխատանքի բաժանումը վարդացնում է
յերեխաների մեջ պատասխանատվութեան զգացում դեպի հանձնված
աշխատանքը: Նույնպես շատ կարևոր է, վոր աշխատանքը վերջացնե-
լուց հետո յերեխաները կոլեկտիվորեն հաշի առնեն իրանց աշխա-
տանքի արդյունքները, գնահատեն: Այդ հաշիառման ժամանակ պետք
է յերեխան հանվեն իրանց աշխատանքի արդյունքները, հաշի առնվեն
աշխատանքի արգելքները և պարզվի, թե ինչ միջոցով տպագրում
պետք է, կազմակերպվի աշխատանքը: Կարելի չե միևնույն աշխատանքը
հանձնարարել մի քանի բերեալի, վորոնք միաժամանակ մասնակցում
են բոլոր պրոցեսներին: Աշխատանքի ընթացքում ղեկավարը պետք է
հետեւի կարգապահութեանը, վոր յերեխաները կատարեն իրենց հան-
նված աշխատանքն առանց ընկերներին խանգարելու, վոր կանոնավոր

ոգտվեն գործիքներով, չհոգնեն: Մասնակցելով յերեխաների աշխա-
տանքին, ինքը ղեկավարը կատարում է դժվար մասը և ցույց է տա-
լիս յերեխաներին, թե ինչպես պետք է աշխատել: Պետք է հետեւի
վոր յերեխաներն աշխատանքի ժամանակ ձեռք բերեն մի շարք կու-
տուր-առողջապահական սովորութիւններ, որինակ՝ հետեւն սենյակի
մաքրութեանը, աշխատանքից հետո հավաքն նյութերը, չափելն հա-
տակը շոր ավելով, մեխերը բերանում չպահն, թել չկտրեն ատամով:
Այդ սովորութիւնները յերեխաները մանկհրապարակում բաղմազան են: Ենթե
Յերեխաների աշխատանքը մանկհրապարակում բաղմազան են: Ենթե
սեղան են պատրաստում, հավաքում և լվանում ամանեղները, կարգի
են բերում բակը և սենյակը, դասավորում աթոռները, սեղանները,
կախիչներ են կարում իրենց սրբիչներին, պետք չեղած դեպքում
կոճակ: Փորում և փոցիւում, ցանում և խնամում են բույսերը, մեխում
են աթոռակները արկղ պատրաստողու համար և այլն:

Կարևոր է, վոր աշխատանքն ունենա հաճախակի նպատակ
և ալո գիտակցի յուրաքանչյուր յերեխա: Կատարելով աշխատանք ի-
րենց կոլեկտիվի համար, նրանք միևնույն ժամանակ պետք է ձեռն
կատարել հանրագում աշխատանք թե կցված արտադրութեան և թե
կոլեկտիվութեան համար:

Յերեխաներին պետք է ծանոթացնել մեծերի կոլեկտիվի աշխա-
տանքին վորպեսզի նրանց մեջ ցանկութիւն առաջ գա մեծերի որինա-
կին հետեւելու: Այդ նպատակով յերեխաներին պետք է տանել դաշա,
բանջարանոց, կոտակերատիվ, գործարան, կոլտնտեսութիւն: Յերեխանե-
րը դիտում են աշխատանքները, տեսնում են, թե ինչպես է բաժանվում
աշխատանքը, գիտակցում են, վոր յուրաքանչյուր մարդ աշխատում է
ընդհանուրի շահերի համար: Կարևոր է, վոր յերեխան յերեխաները
մեծերից առաջադրութիւններն ատանան, որինակ՝ կոլտնտէս վարչու-
թիւնն առաջադրում է մաքրել մի մարդ իր բանջարանոցում: Կոտակե-
րատիվի տոնի աթիվ յերեխաները ծանոթանում են կոտակերատիվին
և հանձն են առնում կազմակերպել կոտակերատիվում մանկական ան-
կուն: «Կենցաղի բարելավում» կազմակերպելու մոմենտին յերեխաներն
աշխատում են մաքրութիւն տարածել իրանց շուրջը՝ պատրաստում
են աղբի արկղ, կախիչներ սրբիչների համար, սապոնի դարակ ճա-
շարանի համար: «Պաշտպանութեան» որը կամպանիա չեն կազմակեր-
պում դրժարի համար և այլն:

Ուրեմն ամեն մի կազմակերպական մոմենտի յերեխաներն աշ-
խատում են թե իրենց հրապարակի և թե կցված արտադրութեան կա մ
կոլտնտեսութեան համար: Յերեխաներին ինքնուրույն աշխատանքներ ի
համար պետք է նրանց տրամադրել վոր պիտանի նյութեր՝ կոճ, թ ել,

մեխ, անիվներ, յերկաթալար, ստվարաթուղթ, թիթեղի կտորներ, փայտի կտորներ, արկղներ և այլն:

Այդ աշխատանքներին հատկացվում է վորոշ ժամանակ. նրանք զարգացնում են չերեխայի մեջ ստեղծագործություն, ձևներեցություն (ինիցիատիվ) հնարագիտություն: Բայց մեծ տեղ տալով կազմակերպված աշխատանքին, չպետք է մոռանալ, վոր չերեխան պետք է և խաղա: Խաղի միջոցով չերեխան արտահայտում է իր տեսածը, իր սպասվորութունները: Խաղը նպաստում է ավելի լավ ըմբռնելու շրջապատը կազմակերպված խաղերի ժամանակ չերեխան սովորում է չեղթարկվել խաղի ընդհանուր որինքներին սպասել իր հերթին, դիմել այդպիսով դաստիարակվում են նրա մեջ կոլեկտիվիստական ունակութուններ: Յերեխայի հաջող որդանիքներ պահանջում է շարժում, իսկ խաղի ընթացքում չերեխան կատարում է ամեն տեսակի շարժումներ, վորոնք նպաստում են նրա առողջացման և զարգացման: Խաղը հանդիսանում է չերեխայի զարգացման սոցիալական ուժեղ գործոններից մեկը, միաժամանակ հանդիսանալով բնորոշական անհրաժեշտություն: Խաղի տեսակները բազմապիսի չեն գնահատելի չեն այն աղետ խաղերը, վորտեղ չերեխան արտահայտում է տեսածը, լսածը, Բայց չերեխան շատ անգամ ակնատես է լինում բացասական չերեցվածքի և արտահայտում է այդ իրի խաղի ժամանակ. որինակ՝ ձևանում է հարբած, հայհոյում է. ներկայացնում է, թե ինչպես սերմամթերման ժամանակ կուլակները հորում են ցորենը՝ կառավարությանը չհանձնելու համար: Դեկավարը պետք է հետևի չերեխաների «ալատ» խաղերին և նրանց արտահայտութուններին, պետք է իր միջամտությամբ ձևափոխի խաղի ընթացքը, հեռի, վոր խաղերի ընթացքում չերեխաներն արտահայտեն այն դասակարգային իդոլոգիան, վոր մենք ուզում ենք դաստիարակել նրանց մեջ: Թող նրանք արտահայտեն իրենց շուրջը տեսած նոր կենցաղի չերեցվածքները կոոպերատիվ, առգիտ, կոլտնտեսության, արակտոր, հասարակական ճաշարան, ընթերցարան, մսուր, չերեցվածքի և այլն: Ազատ խաղերի համար չերեխաներին պետք է տալ այնպիսի նյութեր, վոր նա կարողանա կառուցել արկղից, տախտակներից, ալյուսից և հին անիվներից չերեխաները կառուցում են գործարան, ողապարիկ, արակտոր, շոգեշարժ: Նյութերը տրվում են և լրացվելու չեն համաձայն այն կազմակերպող մոմենտի, վորի շուրջն աշխատանքը տարվում է, որինակ՝ «զաշտպանության որվա» մոմենտին կարելի է պատրաստել կարմիր բանակային կոմունարկաներ, տալ փայտիկներ հրացանների համար, կարմիր դրոշակներ: Գործարան երկուրսի տախտակից հետո պետք է տալ չերեխաներին սովորաթղթից ծխելուլղ, հին անիվներ, հոտրած մեքենայի մասեր: Դեկավարը պետք է աշխատի, վոր չերեխայի ազատ խաղը բազմազան լինի պետք է այնպիսի նյութեր տա, վորոնք զրահվորեն

չերեխայի ստեղծագործությունը: Ցանկալի է և փոքրերին տալ ազգավորից չերեխան պատրաստում է գոնազան կառուցվածքներ: Ավաղը պետք է լինի մաքուր՝ դիշերները ծածկվի և պահվի քիչ խոնավ:

Բացի այս խաղերից, վորոնք հնարում են իրենց չերեխաները, առց են կացվում նաև կազմակերպված խաղեր, վորոնք ունեն վորոշ որինքներ, որինակ՝ գնդակի խաղ, կառուցիլ կլիխոզ, գուշներ խաղ և այլն: Այս խաղերն նպաստում են չերեխաների շարժումների զարգացման, մարմնի ձկուկության և ամբողջ որդանիքի առողջացման: Այս խաղերը մեծ հաջողությամբ կարող են տանել պիոներները: Շարժական խաղերի համար պետք է չերեխաներին տալ գնդակ, ցատկիչ, ասնա:

Որվա վերջին, չերե չերեխաները հոգնած են լինում, պետք է տալ հանգիստ խաղեր խորանարդներ, նկարներ, բուրգեր, մեծերին լուստ:

6. ԱՇԽԱՏԱՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մանկերապարակի աշխատանքներում մեծ տեղ է զբաղելու աշխատանքը բնության մեջ: Մանթացնելով բնության սեզոնային չերեվալթներին, չերեխաների մեջ մենք դաստիարակում ենք ճիշտ փատերիստական մոտեցում բնության չերեցվածքները, պայքարում ենք արտիստաշտութունների և նախապաշտութունների դեմ, զարկ տալով հակադրական դաստիարակության:

Աշխատանք բնության մեջ չերեխաներին բնակացնում է կազմակերպված կոլեկտիվ աշխատանքի, ոգնում է հասկանալու, վոր լարված աշխատանքը գլուղատնտեսական ֆրոնտում՝ դասակարգային պայքար է (չքավորները և միջակները համախմբվում են կոլտնտեսության մեջ՝ կուլակի և կրոնի դեմ):

Յերեխաները ծանոթանալով կոլտնտեսության կյանքի հիմունքներին, համոզվում են վոր գլուղատնտեսության հաջողությունները կախված են վոչ թե աստու կամքից ու տերտերների աղթքներից, այլ նրանից, թե վոր չափով է կիրառվում մեքենայացումն ու պարարտացումը: Նրանք կծանոթանան սերմերի և հողի տեսակներին, հողի պարարտացման և մշակման, գործնականորեն կծանոթանան կոլեկտիվ աշխատանքի կազմակերպմանը (հարվածային լրիգադներ, ողակներ, սոցմրցման լայն կիրառում):

Բյուսերի աճումը, կենդանիների կյանքը, չեղանակի փոփոխությունները, աչդ բոլոր մատչելի չեն նախադրոցականին: Յերեխան ալաիվ է և վոչ թե պասիվ դիտող: Նա ծանոթանում է բնության փոփոխություններին գործնական աշխատանքի ընթացքում, ինքնուր-

ույն հետադուտելով այդ չերեկութեանը: Որինակ՝ աշխատելով բանջարանոցում՝ նա ծանոթանում է բույսերին, նրանց արմատին, ցողունին, տերևին: Բանջարանոցի համար հող պատրաստելիս ծանոթանում է հողի տեսակներին և հատկություններին: Փոքձական մարգերն ապացուցում են, վոր հաջող բերքը վոչ թե ասածու կամքի, այլ մարդու աշխատանքի արդյունքն է:

Եղևուրսիոն մեթոդ ամենալավ միջոցն է՝ չերեխաներին գյուղատնտեսութեան ծանօթացնալու: Եղևուրսիաների ժամանակ չերեխաները դիտում են, թե վոր մեքենան ինչ է կատարում (տրակտոր, սերմագործ, շարքացան և այլն), ծանոթանում են մեքենաների մասերի հետ, թե ինչով են շարժվում (վառելանյութ, շարժիչներ, լծակ, անիվներ, ատամներ): Յեթե կոլտնտեսութեանը կաթնատնտեսական է, կարելի յի ցույց տալ ագնիվացիոն առաստեղներ և համեմատել անհատական տնտեսութեաների անասունների հետ: Այդ եղևուրսիաների ժամանակ չերեխաները հետևում են, թե ինչպե՞ս են մշակվում նյութերը, ուր են ուղարկում կաթն ու պանիրը և ինչ են ստանում նրանց փոխարեն:

Եղևուրսիաներն անհրաժեշտ են նաև բնութեան մեջ, վորտեղ չերեխաներ դիտում են բնութեան չերեկութեանը և հայտնաբերում են չերեկութեաների պատճառաբանությունները: որինակ՝ թռչունների չուռ, ծառերի ծաղիկը գարնանը, բույսերի թառամելը ցրտից և այլն:

Եղևուրսիաները չպետք է լինեն հեռավոր և չերկարատև, մասնավոր վոքերի համար: Կոլտնտեսութեան գյուղատնտեսական կյանքը կարող է շատ հնարավորություններ տալ հասարակական հանրագումար աշխատանքի: Այդ նպատակով նախադպրոցական հիմնադրի աշխատանքները պետք է մտնեն կոլխոզի ընդհանուր պլանի մեջ: Որինակ՝ պատրաստել թռչունների մի քանի բներ հասարակական պտղատու այգում, խնամել ընտանի թռչուններին պիտանքների ոգնությունը: Խրճիթ-ընթերցարանի առաջ ծաղկանոց կազմել, մասնակցել բերքահավաքին (բանջարեղենի և մրգերի), մասնակցել կոլտնտեսութեան գյուղատնտեսական ցուցահանդեսի աշխատանքներին կամ պիտանքների ոգնությունը կոլտնտեսութեան վարչության գրասենյակի առաջ 5—10 ժամ տնկել և այլն:

Պետք է մասնակցել կոլտնտեսութեան ընթացիկ աշխատանքներին, մրգերի հավաքմանը, չորացնելուն, կաղամբի վարունգի թթու գնելուն և այլն: Յանկալի յի կազմակերպել պրիմիտիվ կենդանի անկյուն, վորտեղ չերեխաները հնարավորություն ունենան մոտիկից ծանոթանալու կենդանիներին, միջատներին, թռչուններին կերակրելու գործին, կատարեն տարբական փորձեր՝ չերեկութեան պատճառականությունը:

Թե՛ան կապակցությունը հանդես բերելու կենդանի անկյունում կարելի է պահել ճագար, ադամի, վորնի: Նշանակել հերթապահ բերքադասնորդա խնամքը ֆինկսացիայի չերեխաների, կամ գրի առնել դեկավարի միջոցով:

Փորձեր 1. ցանել փորձնական մարգ՝ ապացույցելու, վոր բերքը կախված է հողի կառուցվածքից: մի մարգի կեսը մշակման ժամանակ փորում են, խնամքով փոխում, իսկ մյուս կեսը փորում չերեսանց: ցանում են միեռնայն բույսը, միատեսակ խնամք են տալիս: հետևում են փորձի արդյունքին և չերեխաներին են հանում՝ հողի կառուցվածքը մշակումը բարձրացնում է բերքը: դրա համար կոլտնտեսություններում գործածվում են մեքենաները, իսկ տերտերներն ու կուլակները խաբում են ժողովուրդին բերքի բարձրացման համար թափոններ և աղոթքներ են կազմակերպում:

2. Պարսպացված փորձ: մարգի կեսը պարբերաբար են, իսկ մյուս կեսը չեն պարբերաբար են, ցանում են բանջարեղեն, միատեսակ խնամում են: Չերեխաները չերեխանցում են հողի պարբերաբար ցուցը բարձրացնում է բերքը:

3. Խնամիկ և անախարհություն: ծանոթացնելով չերեխաներին բույսի խնամքի կուլտուրական ձևերին շրելուն, նոսրացնելուն, քաղհանելուն փաստառությունների դեմ պայքարելուն անհրաժեշտ է շեշտել, վոր խնամքը բարձրացնում է բերքը և ընդհակառակը: համոզվելու համար ցանում են մարգում միատեսակ բույս կեսը խնամում են, իսկ մյուս կեսը թողնում անխնամ: Չերեխաները չերեխանցում են մարգի պետք է խնամեն բույսը, տերտերների աղոթքները սուտ են:

Հիշել փորձերը մատչելի չեն չերեխաներին: այս փորձերի միջոցով նրանք գիտակցում են չերեկութեան կապակցությունը (պարբերաբար հողը լավ բերք ստացվեց, բույսը չխնամեցին, բերքը չստացվեց), համոզվում են, տեխնիկայի առավելությունների մեջ, վորն շնորհիվ չերեխաների մեջ դաստիարակվում է դասակարգային ուղղություն, խորտակվում են կրոնական կենցաղային նախապաշարունակներ և առաջ է գալիս՝ ատկությունը դեպի ծեսերն տերտերները:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՅՈՒՅՄՈՒՆԻՏԵՐ ԿԵՆԴԱՆԻ ԱՆԿՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ

Չերեխաների դիտողություններին և հետադուտական ունակություններին դարձ տալու համար կենդանի անկյան աշխատանքները պետք է կապել բանջարանոցի աշխատանքների հետ: Պետք է ունենալ ապակյա անոթներ՝ մալխայան բզեզի վորդեր, անձրեային վորդ պահելու համար, ավելի մեծ ապակյա անոթներ (ակվարիում) ձկներին, ցորենի համար:

1. Վորդեր. անոթի մեջ դնել անձրեային վորդեր և հողի պինդ կողտեր գցել հաջորդ որը դիտել՝ թե ինչ փոփոխութեան և յենթարկվել հողը:

2. Հուսիսայան (հարմարե) բլեզի վորդ. հողը փորելիս յերեխաները հանդիպում են հունիսյան սպիտակ հաստ կիսածե վորդի՝ 3—4 սանտիմետր յերկարութեամբ այդ վորդերը կտրտում են բուսիների արմատները այդ ապացուցելու համար մի անոթի մեջ դնում են վորդեր. վրան հող են ցանում և դնում բուսած խոտը՝ հողով. մյուս անոթում նույն խոտը՝ հողով առանց վորդի: Ամեն որ առաջին և յերկրորդ անոթներին խոտերի վրա շուր են շաղ տալիս. մի քանի որ հետո առաջին անոթի խոտն սկսում է դեղնել. յերեխաները նկատում են այս յերեւոյթը. այդ ժամանակ պետք է հանել խոտը յերկու անոթներից և համեմատել արմատները. առաջի անոթի խոտի արմատները կտրված են լինում:

3. Գորս. յերեխաներին մեջ պետք է առաջ բերել լավ հողատար վերաբերմունք դեպի գորտերը, վորովհետեւ նրանք պաշտպանում են մեր բանջարանոցները և արտերը վնասատուներից: Գորտը պետք է պահել կենդանի անկյանն ասարակ անոթում, հատակին դնել հողով խոտ և շուր, կերակրել կենդանի վորդերով և ճանճերով, անոթը ծածկել ապակով, հողը և շուրը փոխել 2—3 որը մեկ անգամ. կենդանի անկյունը խնամելուց հետո յերեխաներն անպատճառ պետք է լվացվեն:

7 ԿԵՆԴԱՆԻ ԽՈՍԻ

Աշխատանքի ընթացքում ղեկավարը խոսում է յերեխաների հետ զրույցներ և կազմակերպում, պատմում և, կարգում պատմութուններ չորունգներ: Յերեխան ընդորրինակում է ղեկավարին, ուզում է իր միտքն արտահայտել այդ պատճառով ել ղեկավարը պետք է մեծ ուշադրութուն դարձնի իր անդամութեան վրա և նախորդ մտածի, թե ինչի մասին կարելի չէ պատմել կամ զրուցել յերեխայի հետ: Պետք է սովորեցնել յերեխաներին՝ խոսել պարզ, հակիրճ. մտցնել խոսակցութեան մեջ նոր բառեր և դարձվածքներ: Խոսակցութեանը, զրույցը, ընթերցանութեանը հարստացնում են յերեխայի բառապաշարը: Այն յերեխան, վորի հետ չեն խոսում, ուշ է զարգանում: Զրուցի ձևը և լուրջադակութեանը պետք է համապատասխանի յերեխաների տարիքին, որինակ՝ զաշտ գնալուց և տրակտոր տեսնելուց հետո, պետք է զրույց կազմակերպել տեսածի մասին: Փոքրերին լավ է ցույց տալ համապատասխան նկար, հիշեցնել տրակտորի աշխատանքների մասին թե ինչպես խորն է փորում նա, ինչ ձախ և հանում: Մեծերի հետ նույն զրույցը պետք է խորացնել. սրանք արդեն կարող են տրակտոր

համեմատել գութանի հետ, ղիտակցել տրակտորի նշանակութեանը կոտնտեսութեան համար: Ելի մի որինակ՝ ղեկավարին ուզում է ծանոթացնել յերեխաներին ուրիշ ազգութուններին: Փոքրերին նա պետք է տա մանկական գրքեր, վորտեղ նկարված են այլ ազգերի յերեխաներ, որինակ՝ «Յեղրայրիկներ» Բարգոյի, «Ինչպես վանյան դարձավ ողաշուն», «Մանկական ինտերնացիոնալ» փոխ. Սոկոլյանի, «Զորամայր երի յերգը», «Մի դավաթ թել»—Ագնիցի, Թարգմ Նսկո ապեր: Ղեկավարը ցույց է տալիս պատկերը՝ լուսաբանում է նկարը մի քանի բառերով: Մեծերի հետ նույն զրույցը կարելի չէ ավելի բարդացնել: Նրանց կարելի չէ հասկացնել, վոր բոլոր յերկիրներին բանվորները յեղրայրներ են, վոր բոլորն ել ճնշված են բուրժուաների կողմից, բոլորն ել պաշտարում են նրանց դեմ: Այդ զրույցը պետք է կապել Լենինի պատգամների հետ, մտածել և արտասանել մի քանի լոգունգներ, վորտանավորներ: Այդ զրույցներին միջոցով յերեխան ճիշտ գաղափար է կազմում իր շրջապատի մասին և հարստացնում լեզվի բառապաշարը:

